

ԱԶԳԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 Լ.Ո. 749-ՏԱՐԻ, ԹԻԻ 249 (21005) ԵՐԵՎԱՆԻ, 8 ՅՈՒՆԻՍԿՈՒՆ 2002 10 ԷՁ

ՆԻՒ ԵՈՐՔ

ՄԱԿԻ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՒՆ ՇՈՒՐՁ ԱՊԱՅՈՎՈՒԹԵԱՆ ԽԻՍՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՄԵՂՄԱՆԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔ, 7 (ՌՈՅԹԸՐԸ)- ՆԻՒ ԵՈՐՔԻ ռուսականությունը երկրի Երկուշաբթի որոշ չափով մեղմացուց ՄԱԿԻ կեդրոնատեղիին շուրջ ապահովական խիստ միջոցառումները, որոնք առնուած էին 11 Սեպտեմբերի ահաբեկչական արարքէն անմիջապէս ետք: Ոստիկանությունը փակած էր բազմաթիւ ճամբաներ, ինչպէս նաեւ «Իսթ Ռիվըր»-ին մէջ կը պահէր բազմաթիւ ռուսականական նաւեր: Այժմ անոնք բոլորը վերցուած են, կը հաղորդէ ռուսականությունը, վստահեցնելով սակայն, թէ կեդրոնատեղիին ապահովությունը կը մնայ հարիւր տոկոսով անխոցելի:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՆՇԵՑ Ս. ԾՆՈՒՆԴԸ

Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, Կիրակի 6 Յունուար 2002ին, Ս. Ծննդեան պատարագը մատուցեց Արամ Ա. կաթողիկոս: Ներկայ էին նախարարներ, երեսփոխաններ, դեսպաններ եւ հոծ թիւով հաւատացեալներ:

Նոյն օրը, Լիբանանի թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբան հայրեր Ս. Ծննդեան պատարագ մատուցեցին, ինչպէս նաեւ վեհափառ հայրապետին տնօրինումով, միաբան հայրեր մեկնեցան Պարսկաստան, Կիպրոս, Պոլիս եւ Հալէպ, միեւնոյն առաքելութեամբ:

Մայր տաճարին մէջ տուած իր քարոզին ընթացքին, Արամ Ա. շեշտը դրաւ արդարութեան վրայ: Ան բաւաւ. «Աստուծոյ Որդւոյն ծնունդը Բեթղէմէմի մէջ արդարութեան ծնունդն է: Աշխարհ դարձած էր աղբիւր անարդարութեան, անիրաւութեան, բռնութեան ու չարիքի: Պատմութեան մէջ Աստուծոյ էջըով, Աստուած արդարութիւնը պարգեւեց մարդուն: Արդարեւ արդարութիւնը հիմքն է խաղաղութեան, աղբիւրը՝ բոլոր բարիքներուն ու յառաջդիմութեան: Կարելի է մարդկային առողջ ընկերութիւն հիմնել առանց արդարութեան: Քրիստոս ո՛չ միայն արդարութիւն

Շար.ը՝ էջ 10

ԼԻԲԱՆԱՆ ԿՂՊՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՎԵՐԻՎԱՅՐՈՒՄՆԵՐ



Դպրոցականներ ժողովին մէջ տուն կը վերադառնան ճիւղածածկ ճամբաներէն...

Լիբանանի մեծ մասը ծածկուած է ձիւնով, մինչ ցուրտի ալիքը մայրաքաղաքէն մինչեւ երկրի ծայրամասերուն եւ գիւղերուն մէջ կեանքը գրեթէ անշարժացուած է: Ըստ օդերևութաբանական գրասենեակներուն՝ կը նախատեսուի, որ այսօր մեղմանայ միջերկրականեան արեւելեան

աւապանին ափերը հարուածող ձիւնամբարիկը, սակայն վաղը անիկա կրնայ վերստին սաստկանալ եւ տեւել երկու օր: Երէկ, հինգ հարիւր մէթր բարձրութենէն սկսեալ կտարեալ ձիւնեց, իսկ 200 մէթրներուն՝ կը նախատեսուի, որ այսօր մեղմանայ միջերկրականեան արեւելեան

շատ մը ճամբաներ մնացին փակ: Մայրաքաղաքի եւ ծովեկերեայ շրջաններուն մէջ եւս անձրեւախառն ձիւն տեղաց, մինչ ջերմաստիճանը ցերեկին կը տարուբերէր 6 - 8 աստիճան, իսկ գիշերը՝ 3 - 6: Շատ մը վարձարաններ, նաեւ մայրաքաղաքի կարգ մը դպրոցներ մնացին փակ:

ՔՈՉԱՐԵԱՆ - ԳԱՐԵԳԻՆ Բ. ՀԱՆԴԻՊՈՒՄ



Քոչարեան եւ Ամենայն հայոց կաթողիկոսը

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ հանդիպում ունեցաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին հետ: Նախագահը եւ վեհափառը քննարկեցին պետութիւն - եկեղեցի յարաբերութիւններուն եւ գործակցութեան առնչուող հարցեր:

Նախագահ Քոչարեան ընդգծեց եկեղեցւոյ առանցքային դերը հայ ժողովուրդի հոգեւոր - բարոյական նկարագրի կերտման, ազգային անդրադարձումներու պահպանման, երկրին մէջ բարոյախոգեբանական առողջ մթնոլորտի ձեւաւորման, ինչպէս նաեւ Հայաստան - Սփիւռք կապերու սերտացման մէջ:

Միւս կողմէ, Ս. Ծննդեան տօնին առիթով, Երեւանի նորակառոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ, Կիրակի օր Գարեգին Բ.ի հանդիսապետութեամբ մատուցուեցաւ Ս. պատարագ: Ներկայ էին նախագահ Քոչարեան եւ Առաջին Տիկիւնը, խորհրդարանի նախագահ Արմէն Խաչատրեան, քաղաքական այլ անձնատրութիւններ եւ մեծ թիւով հաւատացեալներ:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՐԿԱՆԴԱԿԻ ՆՄԱՆ ԿԸ ԲԱԺՆՈՒԻՆ ԵՐԵՎ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ ԿԸՄԵ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Տեղական արարական մամուլին Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով իր կատարած յայտարարութեան ընթացքին, Արամ Ա. կաթողիկոս խօսելով Լիբանանի այժմու կացութեան մասին, ըսաւ. «Մարդկութեան պատմութեան մէջ ներկայ հանգրուանը յղի է դժուարութիւններով, անակնկալներով ու մարտահրաշխանութիւններով: Նոյնն է պարագան Միջին Արեւելքին: Լիբանան եւս դժուար հանգրուան մը կը դիմագրաւէ: Լիբանանի ներքին դրուածքը այնպիսին է, որ որպէս համայնքային երկիր, արտաքին որեւէ տագնապ կամ փոփոխութիւններ իրենց հետեւանքը կ'ունենան լիբանանեան ներքին կեանքին վրայ: Հետեւաբար պէտք է ըլլալ զգաստ, արթուն եւ միակամ:

Վերջին շրջանին լիբանանեան ներքին կեանքէն ներս այնպիսի երեւոյթներ կը պարզուին, որոնց նկատմամբ մենք չենք կրնար այլեւս անտարբեր մնալ: Հայ համայնքի տեսակէտներուն, զգացումներուն, կեցողածքներուն ծանօթ են բոլորը: Մենք մեր հայրենասիրութեան ու լիբանանցիութեան փաստը շատոնց տուած ենք: Որպէս լիբանոն ու պարկեշտ քաղաքացիներ մենք միշտ մեր պարտաւորութիւններուն տէր կանգնած ենք Լիբանանի նկատմամբ: Սակայն, միաժամանակ մենք մեր իրաւունքներուն գիտենք տէր կանգնել երբ ուրիշներ մեր պատասխանատու լուր

Շար.ը՝ էջ 10

ՊԱՐԵՍԻՆԵՒԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՏԱԳԱՊ

ՉԻՆԻ ՄԵԿՆԵՑԱԻ ՇՐՋԱՆԷՆ, ՄԻՆՉ ՍՈՒԱՆԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Միջազգային խաղաղարար ճիգերը կը շարունակուին լուծելու համար պաղեստինեւիսրայէլեան տագնապը: Ամերիկացի պատուիրակ Անթոնի Ջինիի այցելութեանէն ետք շրջանին մէջ առաքելութեան մը ձեռնարկած է Եւրոպական Միութեան պատուիրակի իրաւի Սոլանան, որ կը փորձէ շարունակել ամերիկացի պատուիրակին աշխատանքը:



Սոլանա եւ Շարոն

Ջինի Կիրակի օր աւարտեց իսրայէլ ու պաղեստինեան շրջաններ այցելութիւնը՝ ապահովութեան հարցերու գծով բանակցութիւններ հովանաւորելէ ետք իսրայէլացիներուն ու պաղեստինցիներուն միջեւ: Ջինի շրջան պիտի վերադառնայ Յունուար 18ին: Անոր առաքելութեան նպատակն էր համոզել հակամարտ կողմերը, որ պէտք է գործադրութեան դնեն զինադուրը եւ բա-

նակցութեան սեղան վերադառնան: Ջինիի մեկնումէն առաջ, շրջան հասաւ Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պետը՝ Նաւիէ Սոլանա, որ հանդիպում մը ունեցաւ ամերիկացի պատուիրակին հետ, խորհրդակցելու համար սիրող կացութեան մասին: Սոլանա երէկ տե-

սակցութիւններ ունեցաւ նաեւ իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի եւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆաի հետ: Սոլանայի ջանքերը ըսաւ, որ եւրոպացիներն ու ամերիկացիները միասնաբար կը համակարգեն աշխատանքը: Ան աւելցուց, որ

Շար.ը՝ էջ 10

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«ԱԶԳԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՅԱՌԻԿԸ



224 ԷՁ ՍԱԿ՝ 5000 Լ.Ո.

ԹՐԻՓՈՒԹ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ Հ. Յ. Դ. ԱՎՈՒՄԲ

Երէկ, Ս. Ծննդեան առիթով Թրիփոլի Հ. Յ. Դ. ակումբ այցելեցին քաղաքական եւ պիւնտրական բազմաթիւ անձնատրութիւններ եւ ընդունուեցան տեղւոյն Հ. Յ. Դ. պատասխանատուներուն կողմէ: Այցելուներուն շարքին էին նախարար Նեմիպ Միքայիլ, նախկին նախարար Սթեֆան Տուէյի, երեսփոխաններ Մոհամէտ Եսիհա, Ապտէլիշահման Ապտէլիշահման, Քայսար Մուաուատ, Ահմէտ Քապպարա, Մինայի քաղաքապետ Ապտէլ Քատէր Ալամէտտին եւ գնդապետ Աշրաֆ Ռիֆի:

Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի առիթով շուկայի վրայ է հայաստանէն նոր ներածուած

Yerevan Brandy Co. **Մաճահալան** **Armenian Wine**

3-էն 20 փարուայ 24 փետակ գոնեակ **Չուքի Չալոյ** 4-էն 12 փարուայ 14 փետակ գինի

V.A.K. Trd. Նաստապոթիւնը կը շնորհաւորէ ձեր Սուրբ Ծնունդը

Մեծարանակ եւ փոքրարանակ վաճարքի համար դիմել՝ UNIVERSE Նաստապոթիւն Պոլսոյ, Մարտիրոսապար շէնք, Փոլիկարպոս, Տեղ. 03/626177 - 03/773609

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ՄՈՒՆԻՐ ՀՐԵՒՅՆԸ



Լահուտ կ'ընդունի Արդարադատության Գերագույն Խորհրդի անդամները:

Հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկ ընդունեց Արդարադատության Գերագույն Խորհրդի անդամները, գլխավորությամբ անոր նախագահ Մուսիկ Հրեյնի, որ պարգևատրուեցաւ շքանշանով մը: Հրեյնն սօտ օրէն հանգստեան պիտի կոչուի:

Հանդիպումին ընթացքին նախագահ Լահուտ ըսաւ, որ դատական իշխանութիւնը մեծ է կարեւոր դեր ունի օրէնքի եւ հաստատութեան պետութիւնը կերտելու անհրաժեշտ պայմաններու ստեղծումին մէջ: Ան հաստատեց, որ անհրաժեշտ է ամրապնդել դատական իշխանութեան անկախութիւնը եւ դատարաններուն ապահովել յաջողութեան անհրաժեշտ միջոցները:

Նախագահ Լահուտ նաեւ դրուատիքով խօսեցաւ Հրեյնի գործունէութեան մասին:

Նախագահը երկ ընդունեց նաեւ այցելութիւնները նախկին վարչապետ Ամին Վաֆէյի եւ երեսփոխաններ Միշէլ Մըրի, Նապէմ Խուրի, Նատէր Սըքքարի, Ալուպ Հըմայէտի, Անուար Խալիլի եւ Ղաթթաս Խուրիի:

ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի հետ քննարկեց Պէյրութի մէջ գումարուելիք արաբական գերաստիճանի նախապատրաստութիւնները:

Հարիրի երկ յայտնեց, որ Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի նոր ընդհանուր տնօրէնի նշանակումը պիտի կատարուի նախարարաց խորհուրդի այս շաբթուան նիստին ընթացքին, որ պիտի գումարուի Չորեքշաբթի օր, նկատի առած որ ինք Հինգշաբթի օր պիտի մեկնի Պրիսթի, ուր պիտի ստորագրուի Լիբանան-Եւրոպա գործընկերութեան համաձայնագիրը:

Միւս կողմէ, Հարիրի երկ Ամանորի առիթով հանդիպում մը ունեցաւ վարչապետարանի պաշտօնէութեան եւ անոր լուրերուն հետեւող թղթակիցներուն հետ, եւ անոնց նկատելուաւ, որ կարելի չէ շրջանային պայմանները պատրուակ դարձնելով խուսափել մեր պատասխանատուութիւններէն, որովհետեւ հարցերու մէկ մասին լուծումը մեզմէ կախեալ է, իսկ մնացեալը՝ շրջանային վիճակէն:

Ան նաեւ ըսաւ, որ կատարութիւնը կը գիտակցի բոլոր պատճառներուն եւ կը փորձէ շրջանցել կանոնները:

Հարիրի ըսաւ, որ այս տարին բոլոր անցած տարիներէն լաւ պիտի ըլլայ եւ երկրին վիճակը պիտի բարելաւուի:

Հարիրի ընդունեց ներքին գործոց նախարար Էլիաս Մըրի այցելութիւնը եւ անոր հետ քննարկեց երկրին ապահովութեան վիճակը: Մըր վերադառնալով արաբարտաքին գործոց նախարարներու Փետրուարի վերջերուն Պէյրութի մէջ գումարուելիք ժողովին կարեւորութիւնը, Լիբանանի ապահով վիճակը հաստատելու իմաստով:

ԵԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԻ ԲԱՐԵԼԱՒՈՒՄ

Ուժանիւթի նախարար Մահմուտ Ապտէլ Համուտ Պայտուն երկ կ'ըսէ յոյս յայտնեց, որ այսօրու յիշատակ կը բարելաւուի երկրորդ կողմէն հոսանքի հայթայթումը: Ան ըսաւ, որ նախարարութիւնը երբեք նաեւ չի մտածուի ֆիուլ օյլ ներածած է երկրորդ կողմէն:

Համար, բայց այդ նաեւ ըր ջանք մը օրէ ի վեր կ'ընթացան պայմաններուն պատճառով զժողովուրդին կ'ունենան իրենց «ընդ» պարպելու:

Միւս կողմէ, Պայտուն երկ ընդունեց վառելանիւթ ներածող ընկերութեանց սեփականատէրերու պատուիրակութիւնը, եւ անոր հետ քննարկեց վառելանիւթի տուրքերը գանձելու ձեւը փոխելու առաջարկներ, նկատի առած որ այդ տուրքերուն վրայ պիտի աւելնայ յաւելեալ արժէքի տուրքը:

ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՌԻ ԱՅՅԵԼԵՑ ՍՖԷՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաուի երկ այցելեց Պրեքթ եւ Սֆէյր պատրիարքին հետ տեսակցել ետք ըսաւ, որ իշխանութեան պետերուն միջեւ հարցերը լուծելի են, եւ հիմնական հարցն ու մարտահրաւիրը ելեմը-տական եւ տնտեսական վիճակի բարելաւումն է, իսկ մեծ մարտահրաւիրը շրջանային դեպքերն ու իրադարձութիւնները յաջողաբար եւ, հաւաստելով, որ արաբական գերաստիճանը պիտի գումարուի Պէյրութի մէջ:

«ՇԱՐՔ ԵՒ ԱՌԻՍՏԱՅ» ՕՐԱԹԵՐԹՈՒՆ ԳԾՈՎ

ՊԱՍԼ ՊԵՔԻ ԿԸ ՅՍՏԱԿԱՅՆԷ

Մամլոյ սենտիքայի խորհուրդը երկ սենտիքայի նախագահ Մոհամէտ Պապիպի գլխավորությամբ գումարեց ժողով մը, որուն ընթացքին քննարկեց հանրապետութեան նախագահին դէմ մահափորձի անձիշղ տեղեկութիւններ հաղորդած «Շարք էլ Աուսաթ» օրաթերթին դէմ միջոցառումները:

Ժողովին ետք հրապարակուած հաղորդագրութեան մէջ մամլոյ սենտիքայի նախագահը հաստատեց, որ յիշեալ օրաթերթը լիբանանեան արտօնագիր ունի, ինչպէս նաեւ լիբանանցի պատասխանատու տնօրէն, հետեւաբար արտասահմանեան լրատուական ծառայութիւններէ օգտուելով հանդերձ ան իր պատասխանատու տնօրէնին հետ կը մնայ ենթակայ եւ հաշուետու լիբանանեան օրէնքին:

STUDIO **Lantern**
• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
նկարահանումներ
Հեռ. 01-266866
Ել 03-695399

La Solderie **DE LUNETTES**
La première au Liban
Autoroute Jdeideh
Près Boghos Optic
Tél. (01) 871261

ՄԱՀԱԶԴ

Տիար Թոնի Շատարեան
Տիար Զոհրապ Քէշիշեան
Տէր եւ տիկին Վարդան Գանյրեան եւ զաւակունք
Տիկին Երանուհի Քէշիշեան եւ զաւակունք
Տիկին Սօսի Քէշիշեան եւ զաւակունք
Տիար Գէորգ Կտանեան եւ զաւակունք
Թէնքերեան ընտանիք
Փափագեան ընտանիք
Քէշիշեան ընտանիք
Առաքելեան ընտանիք
Կը գուժեն իրենց կնոջ, բոլոր, մօրաբոլոր, հօրաբոլոր եւ հարազատին:

ՅԱՍՄԻԿ ՇԱՍԱՐԵՒԵԱՆԻ (ՏԾՆԵԱՎ՝ ԸԷՇԻՇԵԱՆ)

Մահը, որ պատահեցաւ Կիրակի, 6 Յունուար 2002ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Չորեքշաբթի, 9 Յունուար 2002ին, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանդուցեալին մարմինը պիտի փոխադրուի եւ ամփոփուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ:

• Ներկայ ընդունելի իբրեւ մահազոյ:
• Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Մար Մըրթալի, Վապուհեան շէնք, Երկրորդ յարկ, Հինգշաբթի 10, Ուրբաթ 11, Շաբաթ 12 եւ Կիրակի 13 Յունուարին:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է
ՄԵՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՉԱԻԱՆՔԸ
Հանրապետական Տեսաերկ
«Մենք ենք մեր Չաւախը» վաւերագրական CD - տեսաերկագները:
Ստանալու համար դիմել ԼԵՍԻ կեդրոն (Պուրճ Համուտ), երեկոյեան ժամը 7:00էն ետք:
Սահմանափակ թիւ:
Հ. Յ. Գ. Լ.Ե.Ս.Ի
ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՆՇԱՆՈՒԱԾ
ԼՈՒՄԻԿ
ԱՐԱՊԱՂԵԱՆ
ընդ
ՅՈՎԻԿ
ԱՖԱՐԵԱՆ
5 Յունուար 2002
Պէյրութ

ՆՇԱՆՈՒԱԾ
ՍԱՐԱԼ
ԽԱՉԵՐԵԱՆ
ընդ
ԳԵՌԳ՝
ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ
5 Յունուար 2002
Պէյրութ

ԽՕՄԵՅԵԱԼՔ
ԼԻՏԱ
ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ
ընդ
ՄԱՅՔ
ԿԻՐԻԹԵԱՆ
5 Յունուար 2002
Պէյրութ

ԱՐԱՐԱԿԱՆ ԳԵՐԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ



Նախարարներ Համուտ եւ Սալամէ

Մշակոյթի նախարար Ղասսան Սալամէ երկ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի հետ արաբական գերաստիճանի նախապատրաստութիւնները քննարկելէ առաջ նախագահեց ժողովի մը, որուն ներկայ գտնուեցան ժողովին նախապատրաստութիւնները կատարող պետական վարչութեանց պատասխանատուները:

Ժողովին ետք թղթակիցներու հարցումներուն պատասխանելով, Սալամէ մերժեց կարեւորութիւն ընծայել ժողովին թուականին կամ Պէյրութի մէջ գումարումին գծով ներքին թէ արաբական բեմերու վրայ քաջքշուքներուն եւ անարկութիւններուն: Ան յիշեցուց, որ ամէն արաբական գերաստիճանէ առաջ եւ մինչեւ անոր գումարումը քաղաքական քաջքշուքներ կը պատահին:

Սալամէ հաւաստեց, որ Լիբանան պատրաստ պիտի ըլլայ հիւրընկալելու գերաստիճանը:

ՊԵՐՐԻ
ՉԱՐՄԱՆՔ ԿԸ ՅԱՅՏՆԷ
ԼԻՊԻՈՅ ԿԵՅՈՒԱԾՔԻՆ ՀԱՄԱՐ
Խորհրդարանի նախագահ Նեմիի Պըրրի երկ իր այցելութեան յիշեցուց, որ երբ արաբական գերաստիճանը յեպաձգելու առաջարկ ներկայացուց, այս կոչը իմամ Սուա Սապրի առեւանգումին չկատեց, այլ կը մեկնէր արաբական շահերուն հանդէպ նախանձախնայութեան, հետեւաբար զարմանալի կը գտնէր գերաստիճանին գծով Լիպիոյ կեցուածքը:
Պըրրիի հետ քննարկեց երբ երեսփոխաններ ըսին, որ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ անոր փարակարծութիւններուն գծով նորութիւն չկայ, եւ Պատմաբանի նախագահական դաւադրին մէջ անոր հետ հանդիպում մը չի նախապետուի:

Ա Ֆ Ի Լ
ԻՆԵՆԱՇԱՐԺ
ԱՊԱՇՏՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
85\$
• SOS FREE OF CHARGE
ԻՆԵՆԱՇԱՐԺ ՓՈՒԱՂՐՈՒԹԵԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՉՐԻ
ՀԱՍՅԷ. - ԱՖԵՏԻ ՇԵՆՔ Բ. ՅԱՐԿ
Հեռ. 01-242556 եւ 01-242557

ARA TRAVEL IATA
ARMENIAN AIRLINES
SALES AGENT,
ՈՒՐԱՆՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՅՏԷ
ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ,
ՈՐ Կ'ԱՊԱՇՏՈՎ
ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՒԱՆ - ՊԵՅՐՈՒԹ,
ՀԱԼԷՊ - ԵՐԵՒԱՆ - ՀԱԼԷՊ
ԵՒ ԵՐՈՊԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԶԱՂԱՋԵՐԸ
ARMENIAN AIRLINES ՕԳՆԱԼԵՐՈՎ:
• օդանաւային տոմսեր • ապրանքի փոխադրութիւն
ԱՐԱ ԹՐԱՎԵԼ,
Պուրճ Համուտ, նամակատան շէնք,
Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

NARRA TRADING
& GENERAL SERVICES CO. S.A.R.L.
ՆԱՐԱ ԹՐԵՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.
(Սեփականատը՝ Վաի Մանուչակեան)
ՎԻԵԹՆԱՄԵՆ ԵԹՈՎՊԻԱՅԵՆ ՍՐԻ ԼԱՆԵԱՅԵՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԵՆ ՍՊԱՍՈՒԿԻՆԵՐՈՒ ԱՊԱՇՏՈՎՈՒՄ
• Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
• Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
• Մասնաւոր գիներ, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:
Պաշտոն, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլի» դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989

ԱՐԺԱՆԹԻՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՐԵՍՈՒՆ ՏՈՎՈՍՈՎ Կ'ԱՐԺԵԶՐԿԷ ՓԵՍՈՆ



Լուուարո Տուհալտէ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, 7 (ՌՈՅԹԸՐԸ) - Արժանիքի նախագահ Լուուարո Տուհալտէ գրաւ զրած է զրամանիչի արժեքը վրայ, լուծելու համար տնտեսական տագնապը, հակառակ մտավախութիւններու, թէ անիկա կրնայ սղաճի բարձր համեմատութիւններու եւ աւելի սուր փտածութեան յանգիլ, մինչ արժանիքի սկսած են արդէն սակերը բարձրացնել, ապրանքներ կուտակել եւ սեւ շուկայի վրայ տոլարներ փնտռել:

Փերունական Տուհալտէ կիրակի օր հրամանագրով մը որոշած էր փետն տոլարի դէմ 30 առ հարիւրով արժեքը կէ:


Ամբողջ 10 տարի, արժանիքի կարելիութիւնը ունեցած էին 100 փետնով 100 տոլար արժողութեամբ ապրանք գնել: Այս շարժումը սկսեալ, անոնք պիտի կարենան շուրջ 71 տոլար արժողութեամբ ապրանք գնել:

Տուհալտէ, որ Դեկտեմբերի կէսերէն ի վեր 5րդ նախագահն է, կը յուսայ, որ արժեքը կուտարտաձուլուի եւ աշխատող ձեռքերը աճան պիտի դարձնեն, ժամանակակից տնտեսական տագնապին լուծման:

Արժեքը կուտարտաձուլուի անդրադարձը ի յայտ պիտի գայ Զորքշարթի օր, երբ սակարանային գործողութիւնները, որոնք երբեք չաբաթէ ի վեր արգիւած էին, պիտի վերսկսին:

ԹՈՆԻ ՊԼԵՐ ՇՆԴԿԱՍՏԱՆԵՆ ԱՆՅԱԲ ՓԱՔԻՍՏԱՆ, ԱՊԱ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

Քրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեր երէկ Հնդկաստանէն Փաքիստան հասաւ՝ երկու երկիրներուն միջեւ տագնապը մեղմացնելու փորձի մը համար, մինչ սահմանագիծին վրայ բախումները կը շարունակուին:



Թոնի Պլեր եւ Փերվզ Մշարաֆ

Մինչ Պլեր Փաքիստան կ'այցելէր, Հնդկաստան յայտարարեց, որ Իսլամապատի հետ անմիջապէս բանակցութիւններ կատարելու ծրագիրներ չունի: Նի Տելիի աւելցուց, որ ամէն բանէ առաջ, Իսլամապատ պետք է վերադառնալ սուրբ տարածքներէն իր կեցուածքը իսլամականներու յարձակումներուն հանդէպ, որոնք փաքիստանեան հողերէն Հնդկաստանի դէմ կը գործուին: Հնդկաստանի արտաքին գործոց նախարար ժաւուար Սինկը քսալ, որ Նի Տելիի «աւելի քան բաւարարուած է» Պլերի Հնդկաստան այցելութեամբ: Սինկ աւելցուց, որ Պլեր զօրակցութիւն յայտնած է Հնդկաստանի ահաբեկչութեամբ դէմ իր պայքարին մէջ:

Միւս կողմէ, Քաշմիրի մէջ բախումները կը շարունակուին անսուսուր Սինկը քսալ, որ Նի Տելիի «աւելի քան բաւարարուած է» Պլերի Հնդկաստան այցելութեամբ: Սինկ աւելցուց, որ Պլեր զօրակցութիւն յայտնած է Հնդկաստանի ահաբեկչութեամբ դէմ իր պայքարին մէջ:

Լախար Իպրահիմի հետ: Պլեր հանդիսացաւ արեւմուտքի առաջին ղեկավարը, որ թալեպաններու իշխանութեան տապալումէն ետք կ'այցելէ Աֆղանիստան:

ՓԵՐԵՆ ՍԵՎԵՑԱԲ ԸՆԳՎԱՍՏԱՆ

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս եւ օրէս այցելութեան մը համար Հնդկաստան մեկնեցաւ Երկուշաբթի օր:

Իսրայէլեան դեսպանատունէն պաշտօնատար մը յայտնեց, որ Փերէս տեսակցութիւններ պիտի ունենայ արտաքին գործոց նախարար ժաւուար Սինկի, ներքին գործոց նախարար Ատուանիի եւ վարչապետ Աթալ Պետարի վաճառի հետ: Փերէս պիտի այցելէ նաեւ Պանկալոր եւ Պոնպէյ: Պաշտօնատարը աւելցուց, որ տեսակցութիւններուն ընթացքին, Փերէս պիտի խորհրդակցի երկկողմանի գործակցութեան թափ տալու կարելիութիւններուն մասին, յատկապէս՝ ահաբեկչութեան դէմ պայքարելուն ու տնտեսական մարկետին մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՉԻՆԱՍՏԱՆ ՆՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒ ԿԸ ԴԻՄԵՆ ԱՅՐԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԻՆ ՍԵՋ

Չինաստան, Ռուսիա եւ Կեդրոնական Ասիոյ չորս հանրապետութիւններ, որոնք կը փորձեն ամերիկեան գլխաւորութեամբ ահաբեկչութեան դէմ ընդհանրական պատերազմին մէջ իրենց դերակատարութիւնը վերակենդանացնել, երէկ խոստացած են ամէն տեսակի ահաբեկչութեան դէմ պայքարիլ իրենց երկիրներուն եւ արտասահմանի մէջ:

Շանկհայի Գործակցութեան կազմակերպութիւնը Պէյճինկի մէջ գումարուած ժողովի մը ընթացքին, նաեւ որոշուած է Թալեպան վարչակարգին տապալումը, յոյս յայտնելով, թէ անիկա վերջ պիտի տայ ահաբեկչութեանց եւ թմրեցուցիչներու աղբիւր հանդիսացող Աֆղանիստանի օրերուն, շեշտելով միաժամանակ, թէ երկիրն ներքին հարցերուն միջամտութիւն պէտք չէ ըլլայ:

Սեկնաբաններ յայտնած են, թէ խմբակը, որուն անդամ են նաեւ Տաճիկիստան, Սըրիլանկայիստան, Ղազախստան եւ նոր անդամ դարձած Ուզպեքիստան, հրապարակած է քանի մը կարեւոր նախաձեռնութիւններ, աւելի ընդարձակելով տարրոգութիւնը հակահարկչական միջոցառումներու, որոնց շուրջ համաձայնութիւն գոյացուցած էր 6 ամիս առաջ, Շանկհայի մէջ իր վերջին ժողովին:

Սեկնաբանները քսած են, թէ կազմակերպութիւնը հակահարկչական դէմ պատերազմին մէջ կրտսեր անդամը դարձած է, սակայն, թէ անիկա կրնայ շուրջ շուրջ ղուրս գալ, Աֆղանիստանի մէջ ամերիկեան զինուորական գործողութեան աւարտէն ետք:

Չինաստանի արտաքին գործոց նախարար Թանկ Ճիաքուան շեշտած է, թէ խմբակին անդամները ահաբեկչութեան դէմ իրարու պայքարին զօրավիգ կը կանգնին եւ միջազգային զօրակցութեան կողմը դարձնեն՝ անոնց սեփական արշաւներուն հանդէպ:

ԱՍԵՐԻԿԱՅԻՔ ԲԱՐԵՎԱՐՈՒՄԻ ԿՈՉ ԿՈՒՂԴԵՆ ՈՒՋՊԵՔԻՍՏԱՆԻ ՍԵՋ

Միւս կողմէ, Ուզպեքիստան այցելող ամերիկացի ծերակուտականներ կիրակի օր յայտնած են, թէ Ուզպեքիստան պիտի մղէ Ուզպեքիստանի կառավարութիւնը մարդկային իրաւունքներու եւ ժողովրդավարութեան հանդէպ յաւելեալ յարգանք ցոյց տալու, հակառակ այդ երկիրն նոր դերակատարութեան իրրեւ «հակահարկչական դէմ պատերազմին» մէջ դաշնակից մը:

9 ծերակուտականները, գլխաւորութեամբ դեմոկրատ ձողքի Լիպրմանի եւ նախագահութեան նախկին թեկնածու հանրապետական ձոն Սքէյնի, Թուրքիայէն Շարաթ ու գիշերին հասած էին եւ նախագահ Իսլամ Գարիմովի եւ անոր պաշտպանութեան նախարարին հետ տեսակցութիւն ունեցած՝ կիրակի օր:

Լիպրման յայտնած է, թէ Սեպտեմբեր 11 յարձակումները Ուզպեքիստանի աչքերը բացած են յետխորհրդային Կեդրոնական Ասիոյ իրականութեան վրայ: Ան խոստացած է, թէ Ուզպեքիստանի ապագային շրջանը իր ուստարներու պատասխաններուն վրայ պիտի պահէ:

«Այս շրջանին հանդէպ, Սեպտեմբեր 11էն ետք մեր հետաքրքրութիւնը մնայուն պիտի ըլլայ», ընդգծած է ան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՈՒԼԵՃ

Երկուշաբթի, 4 Փետրուար 2002էն սկսեալ, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քուլտուրալ Լիբրարին հայրութեան ի սպաս կը դէմ իր գրադարանը, որ այսօր կ'աւելնէ պիտի վերանորոգելու հարաւոր Գրադարան:

Հանրային Գրադարանը արդիական սարքաւորումներով եւ բազմալեզու գիրքերով, պարբերաբերքով թէ այլ հրատարակութիւններով պիտի զոհացնէ հետաքրքրութիւնը տարբեր տարիքի բոլոր ընթերցատէրներուն եւ պիտի լրացնէ կարեւոր բաց մը յատկապէս Պուրճ Համուտի եւ ընդհանրապէս Լիբրարանի հայրութեան համար:

Գրադարանը բաց պիտի ըլլայ առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ գիշերուան ժամը 10:00:

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին օգտակար ըլլալ այս գրադարանին զանազան ճիւղերով գիրքեր եւ բերքեր հայթայթելով, կրնան դիմել տնօրէնութեան:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԹՐՔԱԿԱՆ ԲԵՌՆԱՏԱՐՆԵՐ ԻՐԱՔ ՄՏԱՆ

Սեպտեմբերին ի վեր առաջին անգամ ըլլալով թրքական բեռնատարներ Հիւսիսային Իրաք մտան վերսկսելու համար:

Սեպտեմբեր 11ի դէպքերէն ետք Պաղտատ ստեղծուցած էր մագուրի առաքումը դէպի հիւսիսային քրտարանկ շրջանները: Հիւսիսային Իրաքէն դէպի Թուրքիա մագուրի արտածումը ապօրինի կը նկատուի, որովհետեւ ՄԱԿի բարիդի փոխարէն սննդամիջ ծրագիրին շրջագիծէն դուրս կ'իյնայ: Առեւտուրը վերսկսու էրէկ, երբ հարիւր բեռնատարներ մտան հիւսիսային Իրաք մագուր բեռնելու համար: Բեռնատարները այսօր պիտի վերադառնան Թուրքիա: Սեպտեմբերի առկախումէն առաջ, օրական մօտաւորապէս հարիւր բեռնատարներ սահմանը կ'անցնէին մագուր ներածելու համար:

Ի ր ա թ է ս Ն «Սաուրա» օրաթերթը քննադատեց ամերիկացի ծերակուտական ճողքի Լիպրմանը, որ քսած էր, թէ ամերիկեան գործողութիւնը մը անհրաժեշտ է տապալելու համար Սատամ Հիւսէյնը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵՐ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պենզին, մագուրին, իւրին, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ ներկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՄՏԱՆԱԿ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կը կարողանաք ստանալ հետեւեալ կերպով.

- ԱՖՇԻԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
- Համազգայինի գրասենեակ, Պուրճ Համուտ
- Գրատուն Caravelle, Չալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրուք
- Obelix հաստատութիւն, Անթիպա

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ՔԱՐԸ ԿԸ ՄՏԱՆԱԿ ԶՐԻՕՐԵՆ

ԱՐԺԷՔՄԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆՆՆԱԿԱԿԱՆ ՍԵՋ

PARAFONDRE PARATONNERRE

Plus de performance pour plus de sécurité

PSR
Made in Spain

NOS RÉFÉRENCES:

IBM - ATT - GENERAL ELECTRIC - XEROX - ALCATEL
SHELL - GENERAL MOTORS - REPSOL

Agent Exclusif:

G. AYANIAN & SONS

Dora: 01-255222
Gemmayzé: 01-447000

ԳԻՒՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ըստ Հայաստանի նախագահի մամուլի գրասենյակից, Հայաստանի նախագահ Ռուպերթ Բոչարեան 29 Դեկտեմբերին հրամանագրով մը ստորագրած է վահրամ կառույցները Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Գրեգորիանի (նստավայրը՝ Աթէնք):

Նախագահական այլ հրամանագրով մը Կարինէ Ղազարեան Գրեգորիանի Գերմանիոյ մէջ Հայաստանի դեսպան (նստավայրը՝ Պերլին) ազատ կացուցուցուց Ռուսիայի մէջ Հայաստանի դեսպանի պարտականութիւններէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂՆԵՐԸ՝ ԻՐԱՔԻ ԵՒ ԱՅՂԱՆԻՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱՅԻՆԵՐ

Հայաստանի կառավարութեան անցեալ տարուան 20 Դեկտեմբերին նիստին որոշուած է ստեղծել պիւստ-ճէական ֆինանսաւարձմամբ գործող քաղաքական ապաստան հայցողներու յատուկ կացարան-հիմնարկ:

Նոր ստեղծուած կացարանը կը գտնուի Երեւանի Նորք թաղամասի ուսանողական հանրակացարանի առաջին յարկը, բաղկացած է 5 սենեակէ (10 մահճակալով) եւ ունի բոլոր յարմարութիւնները: Կացարանը բարեկարգուած է ՄԱԿի գաղթականներու հարցերով գլխաւոր յանձնակատարի գրասենեակի աջակցութեամբ:

1999-2001 թուականներուն քաղաքական ապաստանի համար Հայաստանի իշխանութիւններուն դիմած են 120 օտար քաղաքացիներ՝ գլխաւորաբար իրաքի եւ Աֆղանիստանի քաղաքացիներ: Սակայն ապաստան ստացած է ընդամենը 6 դիմող (3ը՝ Իրաքէն, 2ը՝ Սոմալիէն, 1ը՝ Սուտանէն):

Աֆղանիստանէն դիմողներուն մեծ թիւը կը պատճառաւորուի անով, որ իրան խտրաբարձր է օտարերկրացիներու մուտքի եւ հաշուառման հսկողութիւնը եւ ֆիզիաները Հայաստան կու գան այլ երկիրներ տեղափոխուելու ակնկալիքով: Օրէնքի տառին համապատասխան, 10 օրուան ժամանակաշրջանի մը մէջ ապաստան չստանալու պարագային դիմողները կը վերադարձուին իրան:

ԹՈՒՐԵՒԱ ԿՐՕՆԱԿԱՆ ՄԵԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Յրանսահայ «Յառաջ» օրաթերթը, «Ալիս» շաբաթաթերթէն քաղելով իր տեղեկութիւնները, կը հարզորդէ, որ Թուրքիոյ կրթութեան նախարարութեան հրահանգով կը պատրաստուի դասագիրք մը, որով միաստեղծեան երեք գլխաւոր կրօնները՝ քրիստոնէութիւնը, մովսիսականութիւնը եւ մահմետականութիւնը միասնաբար պիտի դասաւանդուին դպրոցներուն մէջ:

Համապատասխան յանձնարարութեամբ կրթական երեք մակարդակներու համար, արդէն աւարտած են ծրագիրը, որ թուրք ակադեմիականներու եւ Թուրքիոյ կրթութեան բարձրագոյն մարմինի վաւերացումը ստանալէ ետք պիտի կիրարկուի: Ըստ Թուրքիոյ կրթութեան նախարարութեան պատասխանատուներու մէկ յայտարարութեան, նախաձեռնութեան նպատակն է տարբեր կրօններ աշակերտութեան ծանօթացնել եւ անոնց մէջ բազմաակնկալութեան արժէքները յարգելու ու գնահատելու համակարգ ստեղծել եւ զարգացնել:

Երկրի մտաւարարման համար ծրագիրը կը նախատեսէ քրիստոնէայ ուսուցիչ թրքական վարժարաններու եւ մահմետական ուսուցիչ փոքրամասնութիւններու վարժարաններու համար:

Իր դրական կողմերով հանդերձ, ծրագրի նկատմամբ ժխտական հակազդեցութիւնները արդէն առկայ են: Մարմարա համալսարանի աստուածաբանութեան բաժանմունքի տեսուչ փրոֆ. Զ. Պէլաք քննադատած է դասագիրքը՝ վախճալով, որ միասնական ծանօթացումը անչափահասներու մէջ կրնայ կասկած ներշնչել մահմետականութեան հանդէպ:

Միւս կողմէ, «Ալիս» շաբաթաթերթի հարցումներուն պատասխանելով՝ Պոլսոյ Մերոպ արք. Մուրթեան պատրիարքը ըսած է, որ Պոլսոյ պատրիարքութիւնը այդ դասագիրքը կազմելու վերաբերեալ ոչ մէկ դիմում ստացած է: Ան աւելցուցած է, որ նոյն նախարարութեան պատրաստած կրօնի դասագիրքներուն մէջ քրիստոնէութեան եւ մովսիսականութեան մասին այնքան շատ սխալներ կան, որ միայն նոր հատորներու հրատարակութեամբ կարելի է սրբագրել: Ան յարմար նկատած է, որ նոր դասագիրքը, վաւերացուելու պարագային, հայկական դպրոցներու մէջ օգտագործուի միայն իբրեւ օժանդակ նիւթ, մինչեւ հիմա օգտագործուող քրիստոնէական կրօնի դասագիրքերուն կողմէն:

ՀԱՄԲԻԿ ԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ
HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 - USA

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՏՈՒԱՐՏ ԱԹԱՅԵԱՆ՝ ՄԱՀԱՅԱԾ

1 Յունուարին մահացաւ հայ մտաւորական, ակադեմիկոս լեզուաբան, փիլիսոփայ եւ մանկավարժ, փիլիսոփայական գիտութիւններու դոկտոր, բանասիրական գիտութիւններու թեկնածու, Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի ակադեմիկոս, հայկական փիլիսոփայական ակադեմիայի փոխ նախագահ Էտուարտ Աթայեանը՝ 70 տարեկան հասակին:

Էտ. Աթայեան գիտական եւ մանկավարժական բեղուն գործունէութիւն ծաւալած է Երեւանի պետական համալսարանին, Բրիտոփիանուան լեզուաբանական համալսարանին, ուսուցիչներու կատարելագործման հիմնարկին, Երեւանի պետական ընկերային գիտութիւններու քոլեճին եւ կրթական այլ հաստատութիւններու մէջ: Ան տասնամեակներ շարունակ եղած է գիտութեամբ եւ մանկավարժութեամբ զբաղող հայ երիտասարդ սերունդի ուսուցիչը:

Հայերէն եւ օտար լեզուներով հրատարակուած բազմաթիւ գիտական եւ հրապարակաստական գիրքերն ու յօդուածները, բարձրագոյն գիտութիւնները, յատկապէս ազատութեան գաղափարի իր իւրօրինակ մեկնաբանութիւնը էտ. Աթայեանի համար մեծ յարգանք մը ստեղծած էին ամբողջ աշխարհին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱՅԻ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՒ ԾՆՈՐՀՈՒՄ

Հայաստանի պետական ֆիլհարմոնիան 2001 թուականին տուած է 259 համերգ՝ կէս միլիոնէ աւելի ունկնդրի համար: Հայաստանի պետական ֆիլհարմոնիան ամէն տարի մրցանակներ կը շնորհէ Հայաստանի արուեստագէտներուն եւ մշակութային տարբեր խումբերուն:

Հայ երգարուեստի պահպանման համար 2001 թուականի յատուկ մրցանակ շնորհուած է Ծուշան Պետրոսեանին, տարուան լաւագոյն երգիչ յայտարարուած է Նունէ Եսայեան, իսկ լաւագոյն երգիչ Պապին Պողոսեան, լաւագոյն երաժիշտ նկատուած է Ջիւան Գասպարեան, լաւագոյն յօրինող՝ Ռուպերթ Ամիրխանեան, իսկ լաւագոյն երգիծարան՝ Աշոտ Ղազարեան:

Տարուան լաւագոյն էսթրատային երգչուհի նկատուած են Վարդուհի Վարդանեան եւ Ալլա Լեւոնեան: Ժամանակակից էսթրատային ծրագրերը պատրաստութեան եւ բեմադրութեան համար Հայաստանի պետական ֆիլհարմոնիան գլխաւոր մրցանակ շնորհած է յօրինող եւ բեմադրիչ Արթուր Գրիգորեանին:

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի լաւագոյն համերգային ծրագրի հեղինակ ճանչցուած է յօրինող Արա Գէորգեան:

Տարուան լաւագոյն հաղորդավար նկատուած է Տիրան Յարութիւնեան: Լաւագոյն անուկնդրի համար յատուկ մրցանակ մը շնորհուած է Հրաչուհի եւ Արթուր Ութմազեաններուն: Լաւագոյն պարուստյոյրբեմադրողի մրցանակը շնորհուած է «Բարեկամութիւն» պարի պետական համոյթի գեղարուեստական ղեկավար Նորայր Մեհրաբեանին: 2001 թուականի լաւագոյն հիւրախաղային խումբ նկատուած է Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ Յովհաննէս Չեքիճեանի ղեկավարութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄՊԱՌԻ ՆԱԵՒ ՀԱՄԱՅԱՆՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Հայաստանի արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան մէջ գործող Հայ քանատական պիզնեսի կեդրոնի տնօրէն Արամ Յակոբեան յայտնած է, որ այսուհետեւ միութեան անդամները իրարու հետ պիտի կապուին համակարգչային ցանցով, եւ միութեան անդամ մեծ ձեռնարկութիւնները պատրաստ են «փոքրերուն» աջակցիլ տեղեկատուութեան պաշտպանութեան միջոցներու ձեռքբերման հարցին մէջ:

Արամ Յակոբեան նշած է, որ կը նախատեսուի իրագործել ֆանատայի մէջ պահանջարկ ունեցող հայկական ոսկերչական արտադրութեան սպառումը համացանց - խանութի միջոցով կազմակերպելու ծրագիր: Ինչ կը վերաբերի Հայաստանին, ապա Ա. Յակոբեանի համաձայն, այնտեղ ելկտրոնային առեւտուրի զարգացման առաջին հերթին կը խանգարէ այն հանգամանքը, որ հայեր սովոր են ապրանք գնել գայն անմիջականօրէն գննելէ ետք:

Գրատուն
ՈՍԿԵՐՉԱՐ
• Ունիւք ձեր փնտռած գիրքերը եւ բառարանները
• Ոսկերչարի ԵՐԱՋԱՀԱՆԸ, Երգարան եւ Մանկական գիրքեր
• Չարգացումի միախառը Համայնագիտարաններ՝
Պորժ Համուտ, Ս. Փրկիչ եկեղեցոյ կից Հեռ. 01/264750
P.O.Box 11-8877 Beirut Lebanon

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՄՈ ՍԱՀԵԱՆ. ԲԱՆԱՍՏԵՂԾԸ, ՄՏԱԾՈՂԸ, ՄԱՐԴԸ»

